

լու՝ պալէօնտողդիական լեզուագիտութիւնը, ոչ
բանասիրական-պատմականն, այլ ցեղագիտական
նախապատմականը։ Այս ուսումնախրական եղա-
նակով մենք հասնում ենք նրան, որ ոչ միայն
գտնում ենք, օրինակ, գրաբրի յոգնակի “քո
վերջաւորութեան յարեթական ծագումը”, այլ
եւ այն, որ նա լոկ յոգնականութեան ցուցիչ է
եւ ոչ բնաւ յատուկ ուղղականի վերջաւորու-
թիւնը. վերջին դերն արդէն ձուլման ժամանակ
ազդող նշյն հայերէնի նոր ստեղծագործող հո-
գերանութիւնն է առաջ բերել։ Միւս կողմից,
հարկաւոր է յարեթական լեզուների աւելի
խորասուզող լեզուագիտական պալէօնտոլոգիայի
հմուտ լինել, որպէս զի հետազոտութիւնն ար-
դիւնաւէտ ճամբով առաջ տարուի։ Եթէ մենք
արդէն չգիտնայինք, որ յարեթական լեզու-
ներով “եզն” ուղղակի “հոգի” (-“կենդանի”
-շնչաւոր) նշանակում է, ի հարկէ կը գտուա-
րանայինք իսկական տեղ գտնել հ. յուլ բառի
համար, որ յարեթական ծագում ունի։ Հայերը
պահէլ են “սու-խումբի խօսք “եզն” իմաստի հա-
մար իրանց յուլում, որ պատմական զարգացմամբ
ներկայացնում է հնչենների կողմից առաջին
արմատականի բարձրացմամբ սև (-ծվլ) բառը,
այս ինքն այն բառն, որ “սու-խումբի մէկ լեզ-
ում, վրացերէնում, մինչեւ այսօր պահէլ է
իրան հնուց յատուկ նշանակութիւնը “հոգի”։
(Հայունականութիւն)

v. ՄԱՆ



Türk. جنجرة = arm. ՃՆԳՐԱ

Schon vor mehreren Jahren habe ich in dieser Zeitschrift einen Aufsatz über einige armenische Lehnwörter im Türkischen veröffentlicht¹. Die folgenden Zeilen behandeln abermals einen armenischen Fremdling im Türkischen, den ich aber im Vergleiche zu den von mir bereits festgestellten im Wortschatze eines viel älteren Türkisch vorgefunden habe und der gegenwärtig, soweit ich es feststellen konnte, nicht mehr gebräuchlich ist. Beim Studium des für die ältere türkische Sprache äusserst wichtigen türkisch-arabischen Wörterbuches

¹ Vgl. Armenische Lehnwörter im Türkischen, Handes Amsorya, Wien 1911, Nr. 5.

لغات الترك (kitâb "diwân: luğâti 't-turki"), das ein gewisser Mahmûd ibn Husein ibn Muhammed aus Kaschgar (el-kâşgârî) im Jahre 466 d. H. (beg. 6. IX. 1073 n. Ch.) verfasste und das sich als die älteste arabische Bearbeitung der türkischen Sprache und ihres Wortschatzes darstellt, stiess ich nämlich auf das Wort جنجرة (Bd. III, S. 183), als dessen arabisches Äquivalent der Verfasser das arabische عصفور ‘usfür „Sperling“ angibt. Wie dieses Wort aber auszusprechen ist, dafür gibt uns Mahmûd keinen Anhaltspunkt, denn die Vokalisation des Wortes, die sonst der Verfasser bei allen Wörtern sorgfältig durchführt, fehlt hier. Wenn man aber die Buchstabengruppe جنجرة, die mit Ausnahme des im Türkischen als Direktionsbuchstabe für a (e)- verwendeten Schluss-Elifs nur aus Konsonanten besteht und ȝnȝrga lautet, näher betrachtet, so kann man sofort erkennen, daß sie mit dem armenischen Worte ՃՆԳՐԱ, das ebenfalls „Sperling“ bedeutet, fast identisch ist. Wir können daher mit vollem Rechte sagen, dass جنجرة das armenische ՃՆԳՐԱ ist und ȝnȝrga auszusprechen ist, wobei y den Lautwert des armenischen ը zu haben hätte¹. Für die Richtigkeit dieser Behauptung spricht sowohl das Vorhandensein eines anderen Ausdrückes für „Sperling“ für die Zeit, in der Mahmûd sein Werk schrieb, nämlich ساج sağa (Bd. III, S. 165), als auch vor allem das Fehlen jeder Vokalisation des Wortes. Wäre das Wort ein türkisches und allgemein gebrauchtes, so hätte es Mahmûd sicherlich wie alle anderen auch vokalisiert. Da es aber wahrscheinlich selten gebraucht wurde und obendrein wegen der Anlautskonsonanz auch noch schwer auszusprechen war, hat er die Aussprache nicht genau fixieren können. In den gegenwärtigen einschlägigen Wörterbüchern ist جنجرة nicht zu finden. Jetzt heisst der Sperling im Osttürkischen (Čagataischen) جوچوق ȝupȝuk (wahrscheinlich ein onomatopoetisches Wort), im Kasan-Tatarischen چۈپچۈك čüpčük (was das gleiche Wort ist),

¹ ՃՆԳՐԱ ist im Armenischen eigentlich ein Diminutivum von ՃՆԳՐ (Sperling), welche Form noch jetzt unter dem Volke z. B. in Erzerum, Khotortschur etc. gebraucht wird.

im Osmanischen سرچ serče. Dass umgekehrt armenisch ՃՆՃՂՆԿ nicht etwa aus türkischem جنجرة entstanden ist, dafür spricht nicht nur die im Armenischen häufige Anlautkonsonanz im Worte ՃՆՃՂՆԿ, das übrigens allgemein als echt armenisch angesehen wird, sondern auch das ihm verwandte persische گنجشک gunjšk „Sperling“.

Prof. Dr. F. Kruckitz.



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐԱՅԻ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

Պատերազմի հետեւութեամբ արտասահմանի հետ յարաբերութեան ընդհատութիւնը մեղմ զանկուլ պահեց գրագետ-բանասէր հին արդիւնաւոր գործչի մը կորուստը, որ այնչափ աւելի ցաւալի է, որչափ մեծ է արժանիքը հայ բանասիրութեան համար: Կորուստ մը անձնաւորութեան, որ կը կանխէ յառաջ քան վայելել տալն մեղի անոր պաղալից մրգաշատ անդաստանէն ինսամուած քրտնաջան, գործունեայ երկար տարիներու մէջ:

Նորայր Բիւզանդացի Նախնեաց գրական արտադրութեանց առաջն յարգողներէն էր, մանաւանդ թէ ջերմեռանդ պաշտոններէն, որ իւր բովանդակ կեանկն նուիրած էր անոնց ընթերցման, ուսումնասիրութեան, լուսաբանութեան: Տարիներու ուսմամբ եւ խղճամիտ հետազոտութեամբ ամբարտած էր մեծ հմտութիւն մը նախնեաց երկերու, որպիսի քիչ տուած է հայ բանասիրութիւնը: Եւ այս մշակն գիտութեան կը թողու իւր տարիներու քրտնաջան վաստակն մեծաւ մասամբ անտիպ՝ երթալու հանգչեցնելու իւր յոգնած գլուխը ցուրտ գերեզմանին մէջ:

Հանդոցեալը ծնած է Ա. Պոլիս 1844 Մարտ 4ին. իւր բանասիրական ուսմանց հիմն գրաւ Ա. Ղազարու կղզեկին մէջ, ուր աշակերտեցաւ Հ. Ալիշանի: Միիթարեան մ'ըլլալու գացած էր հոն. իւր փափաքին կը համնի. 1866 Ապրիլ 8ին կը ձեռնադրուի քահանայ: Հ. Յարութիւն թերզոնց, այսպէս կը կոչուէր նա իբրեւ Միիթարեան, նոյն 1866 տարւոյն կը կարգուի ուսուցիչ Ռափայելեան Վարժարանի եւ յաջորդ

տարին կը յանձնուի իրեն Բազմավէպի տեսչութիւնը: 1868—1869 եղած է Մատենադարանապետ:

Երկար չկ մնար սակայն Միիթարայ յարկին տակ: Եօթանասնական թուականներուն հրաժեշտ կու տայ Միաբանութեան. կ'աշխարհականայ. Եւ այնուհետեւ Կորայր Ն. Բիւզանդացի անուամբ կը տեսնենք զինքը մերժ Պարիս, մերժ Ա. Պոլիս եւ աւելի երկար գագարումով Ստաքանդ: 1904ին Հռոմի վրայէն կ'անցնի Վենետիկ եւ հոն կը հաստատուի: Միիթարեան Մատենադարանին մօտ կը յուսար աւելի դիւրաւ շարունակել իւր գրական զբաղումները: Բայց անակնկալ հիւանդութիւն մը ի դերեւ կը հանէ իւր յոյսերը:

1908 Փետրուար 16ին կը գրէր ինձ (Հմնու. Հանդ Ամ. 1908, էջ 155). “Իմ գրական զբաղանաց վերայ՝ 1906ի գեկտեմբերէն ի վեր եկաւ աւելցաւ ծանր հիւանդութիւն մի, հիւանդութիւն անբուժելի, որ գեշեր ցորեկ կը տառապեցընէ զիս, եւ հազիւ հազ թող կու տայ որ ամառնային վաղանցուկ ամիսներուն մէջ փոքր ինչ հանգստանամ”։ Եւ նոյն տարւոյն 14 Մարտ թուակիր նամակով կը յաւելուր. “Եօթը տարիէ ի վեր չունիմ ոչ զիմ առաջին առողջութիւն եւ ոչ զիմ կորով. վեց տարի տանջուիլս բաւական չէր, անցեալ տարւոյ Փետրուարին ծանրագոյն հիւանդութիւն մի սկսաւ տառապեցնել զիս եւ ցարդ կը տառապեցընէ”։ Թէեւ ենթարկուեցաւ յաջողութեամբ վերահատութեան, բայց թէ հասակի տկարութիւնն եւ թէ բազմամեայ հիւանդութեանց հետեւութիւնները չուուին իրեն այն ցանկալի առողջութիւնն որ կարեւոր էր՝ գրական զբաղմանց համար: Բայց իւր աննկուն ոգին գերբնական ճիգեր կը փորձէր ծառայելու իւր գաղափարականին (Հմնու. թղթակցութիւնն “Հանդիսի”, մէջ եւ մասնակցութիւնն “Յուշարձանի”): Գեռ վերջերս ունէր իւր սեղանին վրայ Նահապետ Քուչակի տաղերը, որուն քննական Հրատարակութեամբ կը զբաղէր:

Արդէն յառաջացած էր տարիքը եւ մարմինն լիկուած բազմամեայ հիւանդութենէն, երբ կը հնչէ մահու հրաւէրը: 72 ամեայ կը կափէ իւր մահկանացուն 1916ին (ամիսն եւ օրը չկըցայ ստուգել հակառակ գիմումներուն):

Նորայր իւր բանասիրական ուսմանց սկիզբն ըրաւ Միիթարեան յարկին տակ ի Վենետիկ, ուր երիտասարդական հասակին խորասուզուեցաւ ձեռագիրներու ուսումնասիրութեան: Հին,